«ԱՐԾԻՎ-24»-Ը ՀԻՇՈՒՄ Է

Մեկ տարի Արցախում մարտնչած Նունե Աբրահամյանի վերջին կռվի վայրում Քելբաջարում հուշակոթող կանգնեցվեց: Հեղինակը նրա զինակիցներն էին՝ «Արծիվ-24» կամավորական ջոկատի մարտիկները: Բացման արարողությանը մասնակցում էր նաեւ Նունեի մայրը՝ Լիդա Աբրահամյանը: Արցախից վերադառնալուց հետո ես հանդիպեցի նրան. 50-ամյա սգակիր կինը չնայած անսահման վշտին մանրամասնորեն պատմեց դստեր մասին նրա բնավորության, սովորությունների, ուսումնառության տարիների, մարզական հաջողությունների, Արցախ մեկնելու աներեր վճռականության մասին:

Տասը տարեկանից Նունեն զբաղվել է տարբեր մարզաձե-

ւերով, իսկ երբ 7-րդ դասարանում էր սովորում, հրապուրվեց նետաձգությամբ: Դարձավ սպորտի վարպետ: «Սպարտակ» ընկերության առաջնությունում նա արդեն հանրապետական թիմի մրցավար: Նետաձգության շատ առաջնություններ վարել: Բայց երիտասարդ աղջկա հետաքրքրությունները բազում էին: Նա սովորեց եւ ձեռք բերեց նաեւ բուժքրոջ մասնագիտություն: Եղավ անգլերենի դասընթացների ունկնդիր: Երեւանի վերականգնողական թերապիայի ինստիտուտում աշխատելիս ակամայից եղավ երկրաշարժից հաշմվածների ողբերգությանը: Հետագայում հաստատությունը սկսեց ընդունել նաեւ վիրավոր ազատամարտիկներին: Աղջիկը նրանց վերաբերվում էր հատուկ ջերմությամբ: Սրտացավորեն խնամում էր, բուժում: Շատերը հենց Նունեի շնորհիվ ոտքի կանգնեցին եւ ապաքինված վերադարձան ճակատ: Նրանցից մեկն էլ «Արծիվ-24» կամավորական ջոկատի հրամանատար Սամվելն էր՝ «Ադմիրալը»: Արդեն որոշված էր, անդամագրվելու է այդ ջոկատին եւ մեկնելու Արցախ: Ինքն այնտեղ ավելի է պետք: Մեկ տարում քանի կյանք փրկեց Նունե Աբրահամյանը: Քանիսի՞ համար մայր ու քույր եղավ: Վերջին ճակատամարտում 30 մարտիկի վիրակապեց, իսկ երբ ինքն էր վիրավոր, արդեն վիրակապող չկար: Երկրորդ գնդակը ճակատագրական եղավ: Ընկերների օգնությամբ մեկ կիլոմետր քայլեց, իսկ երբ հնարավոր եղավ վիրահատել, արյունաքամ մարմնին ընկերների տված արյունը արդեն չօգնեց: Նրան վիճակված էր կռվել Արցախի համար եւ անմահանալ Արցախում:

Է. ՄԽԻԹԱՐՅԱՆ